ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 01

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով. *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ավագանու թիվ 01 նիստի օրակարգը:

1.Նոր Խարբերդ համայնքի 2016 թվականի բյուջեի փոփոխված տարբերակը հաստատելու մասին

2. Նոր Խարբերդ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

3. Նոր Խարբերդ համայնքի աղբահանության վճարի գանձումը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության Նոր Խարբերդի փոստային բաժանմունքի միջոցով իրականացնելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 01

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով. *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի ավագանու թիվ 01 նիստի օրակարգը:

1.Նոր Խարբերդ համայնքի 2016 թվականի բյուջեի փոփոխված տարբերակը հաստատելու մասին

2. Նոր Խարբերդ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին

3. Նոր Խարբերդ համայնքի աղբահանության վճարի գանձումը «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության Նոր Խարբերդի փոստային բաժանմունքի միջոցով իրականացնելու մասին

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 02-Ն

### ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և 72-րդ հոդվածների պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Նոր խարբերդ համայնքի 2016 թվականի բյուջեի փոփոխված տարբերակը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Նոր Խարբերդ համայնքի ավագանու «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2015 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 31-Ն որոշումը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՍԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ համայնքի
ավագանու 2016 թվականի
հունվարի 19-ի թիվ 02-Ն որոշման

## ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

| | ԾՐԱԳԻՐ | 1.1.1. | 1.3.3 | 1.6.1 | 9.3.1 | 5.1.1 | 8.1.1 | 8.2.1 | 8.2.3 | 8.2.4 | 6.4.1 | 9.1.1 | 9.4.1 | 9.5.1 | 9.8.1 | 10.7.1 | 4.5.1 | 4.2.1 | 11.1.2. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՈԴՎ | ԱՆՎԱՆՈՒՄ | օր.գ. ծառ | այլ ծառ. | ընդ.բն. հանր.ծառ | ն.ծ.կր | աղբահ | հան.սա | ջրագ | մշ.տ. | պլ.մշ. | մշող.յու | ճանպ. | բ.մ.կր. | եր.դպ. | կրթութ | սոց.աp | ճան.տ | զինդ | պահ.ֆ | |
| 4111 | աշխատավարձ | 38818,0 | | 2472,0 | | 4548,0 | | 2040,0 | 8450,0 | | | | | | | | 2000,0 | | | 58328,0 |
| 4211 | գործ.բանկ.ծառ | | | 40,0 | | | | | | | | | | | | | | | | 40,0 |
| 4112 | պարգևատրում | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4212 | էներգ.ծառ. | 1500,0 | | | | | | 100,0 | 3000,0 | | 2200,0 | | | | | | | | | 6800,0 |
| 4213 | կոմուն.ծառ | 50,0 | | | | 5360,0 | | | 80,0 | | | | | | | | | | | 5490,0 |
| 4214 | կապի ծառ. | 420,0 | | | | | | | | | | | | | | | | | | 420,0 |
| 4221 | ն.գործ. | 50,0 | | | | | | | | | | | | | | | | | | 50,0 |
| 4232 | համ. ծառ | | 450,0 | | | | | | | | | | | | | | | | | 450,0 |
| 4234 | տեղ. ծառ. | 400,0 | | | | | | | | | | | | | | | | 60 | | 460,0 |
| 4239 | ընդ. բն. այլ ծառ | | | 300,0 | | | | | | 1500,0 | | | | | 450,0 | | | | | 2250,0 |
| 4241 | մասնագ.ծառ. | 200,0 | | 150,0 | | | | | 100,0 | | | | | | | | | 100,0 | | 550,0 |
| 4252 | մեք. ընթ. նոր. | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4261 | գրասն. ապ. | 400,0 | | | | | | | | | | | | | | | | | | 400,0 |
| 4267 | կենցաղ.ապ. | 100,0 | | | | | | | | | | | | | | | | | | 100,0 |
| 4264 | տրանս.նյութ | 750,0 | | | | | | | | | | | | | | | | 150 | | 900,0 |
| 4819 | նվիր.կազմ. | | | 650,0 | | | 70,0 | | | | | | | | 400,0 | | | | | 1120,0 |
| 4823 | պարտադիր վճար | 50,0 | | 200,0 | | | | | | | | | | | | | | | | 250,0 |
| 4511 | սուբսիդիա | | | | | | | | | | | 28000,0 | | 17200,0 | | | | | | 45200,0 |
| 4726 | հուղ. նպաստ | | | | | | | | | | | | | | | 3000,0 | | | | 3000,0 |
| 4729 | այլ նպաստ | | | | 500,0 | | | | | | | | 2000,0 | | | 4000,0 | | | | 6500,0 |
| 4269 | այլ նպ.նյութեր | | | | | | 1000,0 | | | | 750,0 | | | | | | 2000,0 | | | 3750,0 |
| 4891 | պահուստ. միջ. | | | | | | | | | | | | | | | | | | 18982,2 | 18982,2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 43538,0 | 450,0 | 3812,0 | 500,0 | 9908,0 | 1070,0 | 2140,0 | 11630,0 | 1500,0 | 2950,0 | 28000,0 | 2000,0 | 17200,0 | 850,0 | 7000,0 | 4000,0 | 310,0 | 18982,2 | 155840,2 |

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016թ. ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ
## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

1. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք ֆոնդային բյուջե 25048.694 հազ.դրամ
2. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ, որն ուղղվում է ծախսերի ծածկմանը 23619.509հազ.դրամ
3. Վարչական բյուջեից / պահուստային ֆոնդից / կատարվող հատկացումներ --
4. Համայնքի սեփականություն համարվող գույքի օտարումից մուտքեր

Ընդամենը եկամուտներ 48668.203հազ.դրամ

### ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

հազ.դրամ

| N | Անվանումը | ՀՈԴՎԱԾ | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բաժին,խումբ,դաս | հոդված | գումարը | | | | |
| 1 | Վարչական սարքավորումներ | 1.1.1 | 5122 | 3000.0 | | | | 3000.0 |
| 2 | Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր | 1.6.1 | 5133 | 6000.0 | | | | 6000.0 |
| 3 | Նավթամթերք և բնական գազ | 4.3.2 | 5112 | 17000.0 | | | | 17000.0 |
| 4 | Ճանապարհային տրանսպորտ | 4.5.1 | 5113 | 20000.0 | | | | 20000.0 |
| 5 | Հանգստի և սպորտի ծառայություն | 8.1.1 | 5113 | 2668.203 | | | | 2668.203 |
| | Ընդամենը | | | | | | | 48668.203 |

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ...ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ...ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

հազ. դրամ

| ՀՀ | Եկամտատեսակները | |
|---|---|---|
| | Ընդամենը եկամուտներ, այդ թվում | 155840.2 |
| | 1. Հարկեր և տուրքեր, այդ թվում | 24635.0 |
| 1/1 | Գույքային հարկեր անշարժ գույքից, այդ թվում | 4733.1 |
| | Գույքահարկ շենքի և շինությունների, որից | 1833.0 |
| | Ֆիզիկական անձանցից | 1571.0 |
| | Իրավաբանական անձանցից | 262.0 |
| | Հողի հարկ, այդ թվում՝ | 2900.1 |
| | Ֆիզիկական անձանցից | 2883.4 |
| | Իրավաբանական անձանցից | 16.7 |
| 1/2 | Գույքահարկ փոխադրամիջոցներից | 17997.9 |
| 1/3 | Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում | |
| | Տեղական տուրքեր, որից՝ | 1904.0 |
| | Շինությունների շինարարության թույլտվության համար, որից | 120.0 |
| | Հիմնական շինությունների համար | 120.0 |
| | Ոչ հիմնական շինությունների համար | |
| | Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն | 10.0 |
| | Շինությունների քանդման թույլտվություն | 15.0 |
| | Ծխախոտի վաճառքի թույտվություն | 250,0 |
| | Խմիչքների իրացման համար | 250,0 |
| | Բացօրյա վաճառքի համար | |
| | Վառելիքի վաճառքի համար | 350.0 |
| | Ժամը 24$^{00}$ –ից հետո աշխատելու համար ,առևտրի կազմակերպում | 25,0 |
| | Արտաքին գովազդի համար | 864.0 |
| | Տաքսի ծառայության թույլտվության համար | 20,0 |
| 1/4 | Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ, այդ թվում՝ | |
| | Պետական տուրքեր, այդ թվում՝ | |
| | Զագս | |
| | Նոտար | |
| 1/5 | Այլ հարկային եկամուտներ / տույժեր և տուգանքներ/ | |
| | 2. Պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 126049.9 |
| 2/5 | Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/ | 126049.9 |

| | | |
|---|---|---|
| | Նպատակային հատկացումներ /սուբվենցիա/ | 0.0 |
| | Պետ. բյուջեից համայնքի վարչ. բյուջեին տրամադրվող այլ դոտացիա | 0.0 |
| | **3. Այլ եկամուտներ, այդ թվում** | **5155.3** |
| 3/3 | Գույքի վարձակալությունից մուտքեր, որից՝ | 120.3 |
| | Հողերի վարձակալություն | 120.3 |
| | Այլ գույքի վարձակալություն | |
| 3/4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում՝ | - |
| | Պատվիրակված լիազորություններ | - |
| 3/5 | Վարչական գանձումներ, այդ թվում | 35.0 |
| | Տեղական վճարներ | 35.0 |
| | Աճուրդին մասնակցելու համար | 10.0 |
| | Շին.ավարտը փաստագրելու համար | 25.0 |
| 3/6 | Մուտքեր տույժերից տուգանքներից, այդ թվում | |
| 3/9 | Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթական այլ եկամուտներ | 5000.0 |
| | Վարչական իրավախախտումների համար | - |
| | 4.Վարչական բյուջեի մնացորդ որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 03-Ն

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ

Հավելված
Նոր Խարբերդ
համայնքի ավագանու
հունվարի 19-ի թիվ 03-Ն
որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, որպես կանոն, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու որոշմամբ քաղաքաշինական կանոնադրությունը կարող է մշակվել նաև մինչև գլխավոր հատակագծի և (կամ) գոտևորման նախագծի մշակումը՝ որպես առանձին փաստաթուղթ: Այս դեպքում կանոնադրությունը կցվում է նախագծային առաջադրանքին և պարտադիր հաշվի է առնվում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.3. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի .Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

## II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Համայնքի տարածքում գտնվող կարևոր շենքերի և շինությունների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի, ճակատների ձևավորման առանձնահատկությունների, օգտագործված շինանյութի և կառուցման եղանակի նկարագրությունը:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների նկարագրությունը, դրանց ներկայիս վիճակը, վերականգնման ու պահպանման հետ կապված խնդիրները:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

## IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Նկարագրվում են համայնքի տարածքում գտնվող համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները, բերվում են դրանց հետ առնչվող պատմությունները, ներկայացվում են շենքերի և շինությունների ներկա վիճակը, վերականգնման և պահպանման հետ կապված խնդիրները:

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

## V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Թվարկվում են այն ճարտարապետական ոճերը, հնարքները, դեկորատիվ տարրերը, ճակատների ձևավորման առանձնահատկությունները, դռների, պատուհանների համաչափությունները, շինարարական նյութերը և կառուցման եղանակը, որոնք պահպանվելու են համայնքի տարածքում և խրախուսվելու են նոր շենքերի կառուցման ժամանակ:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. շենքի մասշտաբը, ճակատային լուծումներն ու դրանք շեշտադրող տարրերը (զարդաքանդակները, շքամուտքը (պորտալը), որմնախորշերը, շվաքարանները, քիվերը, կամարները և այլն),

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը,

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները (.հինգերորդ ճակատե), ինչպես նաև ճակտոնները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն,

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները),

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, զբաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները),

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը,

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով),

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ. զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն).

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

## 3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր),

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ),

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ).

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նոր Խարբերդ, (0236)6-00-30 norkharberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2016թվականի N 04

## ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՐԲԵՐԴԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 30-րդ կետի 2-րդ պարբերության պահանջով *համայնքի ավագանին որոշում է.*

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի աղբահանության վճարի գանձումը 2016 թվականից իրականացնել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության Նոր Խարբերդի փոստային բաժանմունքի միջոցով:

2. Առաջարկել Նոր Խարբերդ համայնքի ղեկավարին համայնքի աղբահանության վճարի գանձումը ապահովելու նպատակով «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել համապատասխան պայմանագիր:

Կողմ -9　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ՄԻՍԱԿ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ԽՈՐԵՆ
7. ՆԵՐՍԵՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՈՌ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　　ԿԱՄՈ ԿԱԿՈՅԱՆ